# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Շինարարության կազմակերպման աշխատանքների» նախագծով նախատեսվում է նախապատրաստել Գայի պողոտայի և «Ջրաշխարհ» -ի հարևանությամբ գտնվող այգու վերականգման և բարեկարգման շինարարական հրապարակը: Շինարարական հրապարակի կազմակերպման համար, անհրաժեշտություն է առաջանում ժամանակավորապես զբաղեցնել 8000 ք.մ. տարածքը:

Շինարարական աշխատանքների կազմակերպման համար,արտաքին ժամանակավոր ճանապարհի կողմից շինարարական հրապարակի պարագծով տեղադրել ժամանակավոր ցանկապատ: Կառուցվող ցանկապատի համար օգտագործել ե/բետոնյա հավաքովի էլեմենտներ, պողպատյա գլոցվածքներ, փայտանյութ, ալիքավոր թիթեղ:

Դեպի շինհրապարակ նախատեսվում է B=5.0մ լայնությամբ ցանկապատ դարպասներ՝ դռնակներով: Շինհրապարակի ներսում կազմակերպել տրանսպորտային միջոցների անվադողերի լվացման կետեր, շին հրապարակում դրսից և ներսից ապահովել լուսային ազդանշանային համակարգով: Տրանսպորտի ելումուտի համար տեղադրել երթևեկության կանոնները ազդարարող նշաններ:

Շինհրապարակից դուրս տարածքում պահպանել պատշաճ մաքրություն:

Այգու կառուցման շինարարության ընթացքում պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները: Շինարարական նյութերի պահեստավորումը ելնել շինհրապարակի առկա վիճակից և դրանց ներկրումը կատարել պահեստավորման համար նախատեսված մակերեսներից: Շինհրապարակում նախատեսվում է տեղադրել էլեկտրական բետոնախառնիչներ 0.5 խ.մ. տարողությամբ:Նյութատեխնիկական մատակարարումը ապահովելու համար նախատեսվում է օգտագործել անվավոր սայլակներ և ձեռքի պատգարակներ: Շինարարության ավարտից հետո անհապաղ ազատել ժամանակավորապես զբաղեցրած 8000 ք.մ. տարածքը, անհրաժեշտության դեպքում բարեկարգել:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքային անընդհատությունը:Մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը, հարդարման նյութերը ավտոմոբիլային փոխադրամիջոցներով՝ Գայի պողոտայից, արտաքին ժամանակավոր ճանապարհով բերվում են շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորումը և տեղադրումը:

Շինհրապարակում նախատեսվում է ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում:

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Բետոնի խտացումը անրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթռիչներով: Կաղապարամածերի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70 % ամրության ձեռք բերումից հետո:

## ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ



| Հ/Հ | Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը | ԹԵՐԹ |
|---|---|---|
| | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | |
| 1 | ԳԼԽԱԹԵՐԹ | ՇԿ-1 |
| 2 | ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՇԿ-2 |
| 3 | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ՇԿ-3 |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ.ՔԵԼԵՋՅԱՆ | | ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ ԵՎ «ՋՐԱՇԽԱՐՀ»-Ի ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | XX | | |
| Ն.Գ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Գ.ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | | | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Տ.ԲԱԲԱՅԱՆ | | | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | ՇԿ-1 | 3 |
| | | | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | «ԵՃՇՊՀ» | | |
| | | | ԳԼԽԱԹԵՐԹ | | | |